Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

| | |
|---|---|
| Կազմակերպության տվյալներ<br>● Անվանում, հասցե<br>● Տնօրեն<br>● Էլ.հասցե<br>● Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com |
| | |
| Հետազոտության թեմա/վերնագիր<br>● Հետազոտության թեմա | Համակցված դասը որպես կրթության նկատմամբ սովորողների մոտիվացիայի բարձրացման միջոց |
| | |
| Ուսուցչի տվյալներ<br>● Ա.Ա.Հ.<br>● Մասնագիտություն<br>● Հեռախոս<br>● Էլ. հասցե<br>● Դասավանդվող առարկաներ<br>● Դասարաններ | Սահակյան Նելլա Գուրգենի<br>Մանկավարժ<br><br>Հայոց պատմություն<br>Հայոց եկեղեցու պատմություն Հայրենագիտություն<br>5-9-րդ դասարաններ |

| | |
|---|---|
| Ուսումնական հաստատության տվյալներ<br>● Անվանումը, հասցե<br>● Հեռախոս<br>● Էլ. հասցե (տնօրենության)<br>● Web կայքի հասցե | Աբովյանի թիվ 7 հիմնական դպրոց<br>ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան 2-րդ միկրոշրջան, 20 շենք<br>+374-222-21946<br>abovyan7@schools.am<br>http://www.abovyan7.schoolsite.am/ |

Բովանդակություն

Ներածություն 4

Գրականության ակնարկ 9

Հետազոտության մեթոդները, գործիքները 11

Համակցված դաս 1 15

Համակցված դաս 2 16

Եզրակացություններ, առաջարկություններ 18

Օգտագործված գրականության ցանկ.....22 Հավելված 1

23

Հավելված 2 26

Ներածություն

| | |
|---|---|
| Նպատակը եւ հետազոտական հարցը | Ժամանակակից աշխարհում, այդ թվում՝ կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները հրամայական դարձրին վերանայել այն գործիքների և մեթոդների ամբողջությունը, որոնք մեծամասամբ կազմում էին դասընթացի հիմքը<br>Առաջին պլան մղվեց ոչ միայն բոլոր աշակերտների ներգրավումը, հետաքրքիր, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասընթացի կազմակերպումը, այլև՝ աշակերտների մոտ հետաքրքրվածության, ներգրավվածության աստիճանի բարձրացումը, այլ կերպ ասած՝ աշակերտների մոտիվացիան դարձավ հիմնական գործոններից մեկը՝ որպես դասընթացի արդյունավետությունը պայմանավորող միջոցի<br>Ժամանակակից կրթական չափանիշները ընդգծում են աշակերտների փոխհամագործակցության, փոխադարձ օգնության անհրաժեշտությունը, որի համատեքստում առավել մեծ կարևորություն են ձեռք բերում համակցված դասերի կազմակերպումը, որոնց ընթացքում կիրառվում են բազմաբանակ մեթոդներ և գործիքներ<br>Անդրադառնալով հետազոտության |

| | |
|---|---|
| | իրականացման համար ընտրված թեմային՝ կարևոր ենք համարում նշել, որ հայ ժողովրդի, որպես աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի, պատմությունն իմանալը ոչ թե ցանկալի է, այլ՝ պարտադիր Հատկապես անկախության կերտումից ի վեր՝ մեր անբակտելի առաքելությունն է պահպանել այն, ինչը, որպես ժառանգություն, մեզ է անցել հազարամյա մաքառումներից հետո, ինչպես նաև զարգացնել ու հարստացնել մեր պատմությունը<br>Հայոց պատմությունը ունի, նախևառաջ, ճանաչողական մեծ նշանակություն Նրանում ամփոփված են հայ ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյությունը, խորհուրդը և ապագան Հայոց պատմության առարկայի դասավանդման գլխավոր նպատակը ազգային գիտակցությամբ օժտված, համակողմանի զարգացած, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող ազատ, գիտակից անհատի, հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է Այս համատեքստում հետազոտության նպատակն է կիրառել համապատասխան մեթոդներ և գործիքներ, ինչպես նաև մեթոդական հանձնարարականներ՝ համակցված դասի միջոցով աշակերտների՝ |

պատմության նկատմամբ հետաքրքրությունը խթանելու, տարբեր ընդունակություններով և ունակություններով աշակերտների շրջանում փոխօգնության սերմանումը, որի վերջնանպատակն է աշակերտների մոտիվացիայի բարձրացումը

Հետազոտության նպատակը իրականացնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել մանկավարժական, հոգեբանական և հետազոտության խնդրին առնչվող այլ մասնագիտական գրականությունը,
- վերլուծել աշակերների վարքագիծը թիմային աշխատանքներ իրականացնելիս,
- հետազոտել և առանձնացել այն գործոնները, որոնք պայմանավորում են աշակերտների մոտիվացիան, ինչպես նաև հայոց պատմության նկատմամբ հետաքրքրությունը,
- մշակել մեթոդական հանձնարարականներ՝ աշակերտների մեջ համագործակցությունը խթանելու, միմյանց աջակցելու

| | |
|---|---|
| | ցանկությունը խթանելու, ինչպես նաև այս միջոցով աշակերտների մոտիվացիան բարձրացնելու համար<br>Հիմք ընդունելով վերոգրյալը, հետազոտական հարց է սահմանվել հետևյալը.<br>● Արդյո՞ք համակցված դասը կբարձրացնի կրթության նկատմամբ սովորողների մոտիվացիան |
| | |
| Թեմայի կարևորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար | Հետզոտության թեմայի արդիականությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ թիրախային խմբում ներառված են նաև ուսումնական հատուկ կարիքներ ունեցող, ինչպես նաև տարբեր ունակություններ ունեցող աշակերտներ Սովորողների միջև համագործակցությունը և փոխըմբռնումը անհրաժեշտ է արդյունավետ դասընթաց ապահովելու տեսանկյունից Սա նաև վարձի փոխանակում է աշակերտների միջև |
| | |
| Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված | սովորել սովորելու կարողունակություն<br>Համագործակցային ուսուցման զարգացումը, մասնավորապես՝<br>● աշակերտի՝ որպես անձի |

| | |
|---|---|
| նպատակի ուսումնասիրությունը | զարգացումը և անհատականության ձևավորումը,<br>● հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը,<br>● սթրեսի հաղթահարումը,<br>● աշակերտների միջև փոխգործակցության և փոխըմբռնման զարգացումը,<br>● շրջապատի հետ առողջ փոխհարաբերությունների զարգացումը |
| | |
| Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին | Համընդհանուր ներառում |

Պարագրաֆներ/մասեր

| | |
|---|---|
| Գրականության ակնարկ<br>● Մեջբերումներ արդեն արված հետազոտությունների,<br>● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից | Դասավանդման և ուսումնասիրության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հանդիսանում են կրթության որակի բարելավման հիմքը Համագործակցային մեթոդը դասավանդման ընթացքում ամենաարդյունավետ գործիքներից մեկն է, և դրա կիրառությունը կարող է բարձրացնել ուսուցանելու որակը և խթանել սովորողների ներգրավածության մակարդակը: Համագործակցային ուսուցման գաղափարը, ըստ էության, հայտնի է դեռ վաղ ժամանակներից Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ճշում էր, որ. «սովորեցնողը սովորում է կրկնակի»[1] Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ. «սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշին»[2] Իսկ ռուս հոգեբան Վիգոտսկին պնդում էր, որ կան որոշակի ուսուցումներ, որոնք կարող են իրականացվել միայն մեկ այլ անձի օգնությամբ[3] Հետագայում զարգացնելով փոխօգնության և փոխգործակցության միջոցով դասընթացների կազմակերպման գաղափարը՝ Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինը մշակեց համագործակցային ուսուցման մեթոդը Սլավինը |

[1] Любкер Ф. Seneca / Реальный словарь классических древностей по Любкеру / под ред. Ф. Ф. Зелинский, А. И. Георгиевский, М. С. Куторга, Ф. Гельбке, П. В. Никитин, В. А. Канский — СПб.: Общество классической филологии и педагогики, 1885, էջ 31

[2] Коменский Я.А., Избранные педагогические сочинения. Том 2-Москва: Педагогика, 1982-էջ 551

[3] Размыслов П. О “культурно-исторической теории” психологии Выготского и Лурия // Книга и пролетарская революция. 1934. № 4, էջ 77-78

[4] Slavin, Robert E., Cooperative Learning: Theory, Research, and Practice. Allyn and Bacon., 1995, ISBN 978-0- 205-15630-6, էջ 51

արդարացիորեն նշում էր, որ այս մեթոդը առավել արդյունավետություն է ապահովում հատկապես ցածր առաջադիմությամբ աշակերտների շրջանում, քանի որ նրանց նույնիսկ չնչին ներգրավվածությունը կարող է երաշխավորել գերազանց արդյունքներ[4]

Համագործակցային ուսուցման մեթոդի զարգացման գործում իր նշանակալի դերակատարումն է ունեցել նաև ֆրանսիացի հոգեբան Պիաժը, որը համագործակցային ուսուցման մշակման հիմնական ձևը համարում էր աշակերտների սոցիալական և ճանաչողական բախումը[5]

Անդրադառնալով համագործակցային ուսուցմանը՝ Քրուքը նշում էր, որ ուսումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ սովորողը ստիպված է արդարացնել իր գաղափարները հասակակիցների առջև[6]: Մյուս կողմից, Սոլեն կարծում էր, որ մնացածի հետ տեղեկատվությունը կիսելու փաստը նպաստում է սովորողի ինքնագնահատմանը, մեծացնում է նրա հետաքրքրությունը և մարտահրավերներ է առաջադրում[7]:

Այսպիսով, ամփոփելով վերոգյալը՝ կարող ենք փաստել, որ ուսուցման համագործակցային մեթոդը ոչ միայն հայտնի է եղել, այլև կիրառվել է դեռ վաղ ժամանակներից Ապացուցելով իր արդյունավետությունը՝ այս մեթոդը լայն կիրառություն է ստացել նաև հետագայում և լայնամասշտաբ օգտագործվում է նաև այսօր

[5] Пиаже Ж. Речь и мышление ребенка. — Педагогика - Пресс, 1999, էջ 15:
[6] Aitken, J. & Neer, M. (1993) College student question-asking: The relationship of classroom communication apprehension and motivation. Southern Journal of Communication 59, էջ 73-81
[7] Dallalfar, A., Kingston-Mann, E., & Sieber, T., Transforming classroom culture: Inclusive

pedagogical practices. New York: Palgrave, 2011, ห 17

| | |
|---|---|
| | Համագործակցային ուսուցման հիմքը կազմում են աշակերտների փոխըմբռնումը, փոխգործակցությունը, ինչպես նաև թիմային աշխատանքի կարողությունը<br>Սույն հետազոտության շրջանակներում ուսուցման համագործակցային մեթոդի կիրառումը առավելապես ուղղված է կրթության նկատմամբ աշակերտների մոտիվացիայի մակարդակի բարձրացմանը՝ հետաքրքրությունների խթանման և տարբեր աշակերտների ներգրավման, ինչպես նաև այլ մեթոդների կիրառման միջոցով |
| | |
| Օգտագործված մեթոդները, գործիքները | Համակցված դասը «Հայոց պատմություն» առարկայի ուսուցման շրջանակներում հիմնականում ներառում է տեսական նյութեր, գործնական աշխատանքներ, ցուցադրումներ (նաև՝ էքսկուրսիաներ) Ուսուցման գործընթացում, կախված թեմայից, դասի նպատակից, դասարանից, ֆինարկվող հիմնախնդրի և սովորողների պատրաստվածության մակարդակից և այլ առանձին հատկանիշներից, ինչպես նաև առկա հնարավորությունից և տվյալ դասի առանձնահատկություններից, կարող են ընտրվել ուսումնական հետևյալ տեսակները՝<br>• ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում,<br>• ինքնավերլուծություն, զրույցներ և հարցազրույցներ |

շրջապատի մարդկանց տարբեր խմբերի հետ,

- ԶԼՄ-ներից ստացած տեղեկության վերլուծություն,
- հիմնախնդիրների հետազոտում,
- անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում,
- միջառարկայական և ներառարկայական կապի իրականացում:

Առարկայի դասավանդման ընթացքում կարևոր է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը, ինչպես տարբեր պատմական երևույթների համակողմանի ընկալման, այնպես էլ ազգային և համամարդկային արժեքների հաղորդակցման համատեքստում

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած տեսությունները երեքն են՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման և վարքագծային ուսումնասիրության

Դասընթացի բոլոր փուլերը պետք է ապահովեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը.

- համագործակցային մեթոդի կիրառմամբ աշակերտների մոտիվացիայի բարձրացում,
- միջառարկայական և ներառարկայական կապի ստեղծում,
- ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունների զարգացում,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատելու հմտության ձևավորում,
- միմյանց հետ համագործակցելու և համաձայնության

գալու, փոխօգնության ունակության զարգացում,

- փոխներգործում կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում

Համագործակցային ուսուցումը ենթադրում է նաև ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցչին առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ, որոնց թվում՝

- դասերի վարժություններ, առաջադրանքների պլանավորում,
- սովորողների խմբերի ձևավորում,
- սովորողների տեղաբաշխում,
- առաջադրանքների ներկայացում և բացատրում,
- խմբային աշխատանքի վերահսկում և անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ միջամտություն,
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում
- գնահատում

Համագործակցային խմբի ղեկավարությունը հանգում է հետևյալին.

1. խմբերը ձևակերպում են առաջադրանք, լուծում են այն և պատրաստվում այն ներկայացնելուն,
2. խմբերից պատահականորեն ընտրված անդամը ներկայացնում է խմբերի աշխատանքի

| | |
|---|---|
| | վերջնարդյունքը,<br>3. բոլոր անդամները մասնակցում են քննարկման և լուծում տալիս հարցերին<br>4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվությունը |
| | |
| Իրականացման ժամանակահատված | 01.09.2022-<br>15.09.2022 |
| | |
| Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/ | Համակցված դաս 1<br>Թիրախ խումբը ներառում է 7-րդ դասարանում սովորող 33 աշակերտ՝ 14 աղջիկ, 18 տղա, որոնց թվում՝ ՈՒՀԿ ունեցող<br>6 երեխա և մեկ ներառական կրթության մեջ ընդգրկված երեխա<br>Վերոնշյալ աշակերտները ունեն հմտությունների և կարողությունների տարբեր մակարդակներ<br>Աշակերտներից մեկը լեզվական արատ ունեցող երեխա է, խոսում է կցկտուր, բառերը հաճախ մոռանում է, բառերը դժվարությամբ է արտաբերում<br>Մյուսները ունեն ուսուցման բարձր և միջին մակարդակ<br>Հետազոտական աշխատանքում ներառված երեխաներից մեկը ունի լեզվական խնդիր, խոսում է դանդաղ, բառերը իրար հազիվ կապակցելով, այնուհանդերձ ուսման |

| | |
|---|---|
| | նկատմամբ դրսևորում է հետաքրքրություն, ունի ձգտում դեպի ուսումը և դրսևորում է հետաքրքրություն դասին մասնակցելու տեսնակյունից<br>Այսպիսով իմ հետազոտական աշխատանքը իրականացրել եմ 7-րդ դասարանում<br>Համակցված դաս 2 Թիրախային խմբում ներառված են 8-րդ դասարանում սովորող աշակերտներ՝ 17 տղա և 18 աղջիկ, ընդհանուր՝ 35 աշակերտ, ընդ որում տղաներից 15-ը թույլ կարողությունների տեր աշակերտներ են: |
| Համակցված դաս 1 | Թեմա՝ «Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն»<br>Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, բոլորը ներկայացրեցին իրենց տնային աշխատանքները, բաց թողնված որոշ սխալներ շտկելուց հետո անցանք նախորդ դասի անվանումանը, որպեսզի ստուգենք աշակերտների գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ Նախորդ դասերը ամփոփելուց և ֆնևարկելուց հետո, անցնում ենք կատարում նոր դասին Նոր դասի ուսումնասիրումըսկսվում է մտագրոհ վարժության միջոցով.<br>Քրիստոնեություն |




Ուսուցիչը դասախոսության միջոցով ներկայացնում է նոր դասը Քանի որ իմ հետազոտական թիրախում ընդգրկված աշակերտները 6-ն էին, դասարանը բաժանեցի 5 խմբի և յուրաքանչյուր 6 աշակերտից 1-ը ընդգրկեցի մեկ խմբում Յուրաքանչյուր խմբին հանձնարարեցի մեկ ենթավերնագիր, ընտրեցի խմբի ավագ և տվեցի հստակ հանձնարարություն Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրեն հանձնարարված մասը, և լսում ու պատասխանում է մյուս խմբերի տրված հարցերին, որոնց մեջ ընդրկված են նաև այն ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտը

Դասի ավարտինն հանձնարարեցի տնային աշխատանքը. պատասխանել հարցերին և առաջադրանքներ բաժնի 1-3 հարցերին գրավոր, և դուրս գրել ժամանակագրությունը

Համակցված դաս 2

Թեմա՝ «Ազատագրական պայքարի վերելքը»:

Դասը իր մեջ ներառում է ժողովրդի անկուն պայքարը օտար տիրապետությունից ազատվելու համար

Դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումամբ:

Աշակերտներին տրվեցին հարցեր՝ կապված տնային աշխատանքի հետ: Հետազոտական խմբում ընդգրկված 15 թույլ ունակություններով տեր տղաներին տրվեցին ավելի մատչելի հարցեր կամ խնդրեցի կրկնել դասընկերոջ ասածը: Այնուհետև անցում կատարեցինք նոր դասին, մտագրոհ վարժության միջոցով ստուգեցի աշակերտների գիտելիքները՝ կապված Հայաստանի ազատագրման հետ: Դրանից հետո դասախոսության միջոցով ներկայացրի նոր դասը: Ավելի ուշ դասարանը բաժանեցի 5 խմբի, համապատասխանաբար դասը բաժանեցի հինգ մասի և յուրաքանչյուր խմբին հանձնարարեցի մեկ մաս: Այնուհետև գրատախտակին գծագրեցի Մ-ձև աղյուսակը, որտեղ յուրաքանչյուր խումբ լրացրեց այն սյունակը, որը վերաբերելի էր իրեն հանձնարարված մասին

Այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իրեն տրված բաժինը՝ ուշադիր լսելով մյուս խմբերի պատասխանը, որպեսզի կարողանա պատասխանել իրենց մասին վերաբերվող հարցերին:

Եզրակացություններ, առաջարկություններ

| | |
|---|---|
| Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին | Այսպիսով, սույն հետազատական աշխատանքի արդյունքների ամփոփումը մեզ թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.<br>• համակցված դասը, ըստ էության, հանդիսանում է աշակերտների փոխհամագործակցության, փոխըմբռնման և թիմային աշխատանքի հմտությունները զարգացնող միջոց, որը, հետևաբար բարձրացնում է դասընթացի արդյունավետությունը,<br>• համակցված դասը առավելագույնս ապահովում է բոլոր, այդ թվում միջին կամ թույլ ունակությունների տեր, ՈՒՀԿ ունեցող սովորողների ներգրավվածությունը, ինչը դրական ազդեցություն է ունենում կրթության նկատմամբ սովորողների մոտիվացիան բարձրացնելու գործում<br>Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ հետազոտական աշխատանքի շրջանակում ընգրված թիրախային խմբի սովորողները, անցկացված երկու համակցված դասերի շրջանակներում ցուցաբերեցին առավել մեծ հետաքրքրություն դասի, իրենց դասընկերների և առհասարակ գիտելիքի |

ձեռքբերման նկատմամբ, ինչը վկայում է այստեղակ դասի առավելությունը Հետաքրքրական է, որ սովորողների այս ոգևորությունը պահպանվեց նաև հետագա դասերի ընթացքում

Այսպես, եթե ավանդական դասընթացում նույն թիրախային խմբի սովորողների մասնակցությունը գնահատվում է 30- 40%, ապա համակցված դասի շրջանակներում այս մասնակցությունը գրեթե կրկնապատկվեց՝ հասնելով 70- 80%-ի, ինչը նաև արդյուն է համակացված դասի շրջականերում կիրառվող մեթոդների

Ընդհանուր արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրահանգել, որ կրթության նկատմամբ մոտիվացիայի բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմություն ունեցող աշակերտների շրջանում,
- հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին,
- գրավոր և բանավոր հետադարձ

կապի ապահովում,

- տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և քննարկում,
- թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով:
- համացանցից լրացուցիչ նյութերի ուսումնասիրություն, աշխատանք սկզբնաղբյուրի հետ
- Համակցված դասը էական կերևորություն է ձեռքբերում հատկապես ներկայիս կրթական համակարգի պայմաններում՝ որպես տարբեր կարողությունների տեր սովորողների՝ դասընթացին ներգրավման գործիք

Անդրադառնալով հետազոտական հարցին՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ համակցված դասը, իրավամբ, բարձրացնում է կրթության նկատմամբ սովորողների մոտիվացին, քանի որ յուրաքանչյուր սովորող, այստեսակ դասի շրջանակներում, գիտակցում և զգում է իր կարևորությունը ընդհանուր արդյունքում, որը շահագրգռում է ավելի մեծ դերակատարում ունենալուն

| | |
|---|---|
| | |

- Любкер Ф. Seneca / Реальный словарь классических древностей по Любкеру/под ред. Ф. Ф. Зелинский, А. И. Георгиевский, М. С. Куторга, Ф. Гельбке, П. В. Никитин, В. А. Канский — СПб.: Общество классической филологии и педагогики, 1885, էջ 31
- Коменский Я.А., Избранные педагогические сочинения. Том 2-Москва: Педагогика, 1982-էջ 551
- Размыслов П. О “культурно-исторической теории” психологии Выготского и Лурия// Книга и пролетарская революция. 1934. № 4, էջ 77-78
- Slavin, Robert E., Cooperative Learning: Theory, Research, and Practice. Allyn and Bacon., 1995, ISBN 978-0-205-15630-6, էջ 51
- Пиаже Ж. Речь и мышление ребенка. — Педагогика - Пресс, 1999, էջ 15
- Aitken, J. & Neer, M. (1993) College student question-asking: The relationship of classroom communication apprehension and motivation. Southern Journal of Communication 59, էջ 73-81
- Dallalfar, A., Kingston-Mann, E., & Sieber, T., Transforming classroom culture: Inclusive pedagogical practices. New York: Palgrave, 2011, էջ 17

Հավելված **1**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա | Հայոց պատմություն | Ամսաթիվ | 13.09.2022 թ | Կիսամյակ | 1 | Դասարան | 7 |
| Թեմա | Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն | | | | | | |
| Օգտագործվող նյութեր | Դասագիրք, կավիճ, գրատախտակ, աշխատանքային տետր, Հայաստանի քարտեզը | | | | | | |
| Դասի նպատակ | Գաղափար կազմել միաստվածային կրոնի մասին | | | | | | |
| | Ուսուցման իրականացման փաստացի արդյունքները | | | | | | |
| Վերջնարդյունքներ | Աշակերտները կկարողանան.<br>ճիշտ ներկայացնել միաստվածային կրոնը,<br>վերլուծել քրիստոնեության ընդունման պատմական անհրաժեշտությունը, ներկայացնել Ս.Գրիգոր Լուսավորչի գործունեությունը | | | | | | |
| | | | | | | | |
| Գործողություն. Ժամ/տևողություն | Ուսումնական գործունեություն <u>Աշակերտներ</u> | Ուսումնական գործունեություն <u>Ուսուցիչ</u> | | Հարցադրումներ | | Կիրառվող մեթոդներ | |
| | Անհրաժեշտության դեպքում ուսուցչի հարցերին պատասխանում | Հաշվառում, դասի նախապատրաստում, տնային առաջադրանքների ստուգում | | Նախորդ դասի հետ կապված անհասկանալի հարցերի պարզաբանում | | Հարց ու պատասխան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խթանում | Լսում են ուսուցչին, պատասխանում են հնչեցրած հարցերին՝ հարկ եղած դեպքում տալիս հարցեր Գրատախտակին մոտենում են անվանակոչված աշակերտները, և համապատասխան այնյակում ներկայացնում իրենց հանձնարարված աշխատանքը: | Մտագրոհ մեթոդի շրջանակներում հարցադրումների միջոցով աշակերտներին հիշեցնել նախորդ դասի կարևոր իրադարձությունների և պատմական կերպարների մասին, նրանց կատարած քայլերը Անվանակոչված 2 աշակերտներին հանձնարարել քարտեզի վրա ցույց տալ քրիստոնեության տարածման պատմաշխահագրակ ան տարածքները | 1) Որտեղ է ծագել քրիստոնեությունը 2) Ինչո՞վ է տարբերվում հեթանոսությունի ց 3) Երբ է տարածվել Հայաստանում 4) Երբ է ընդունվել որպես պետական կրոն 5.Ո՞րն էր պատճառը որ Տրդատ 3-րդ-ը ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն | Հարց ու պատասխան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իմաստի ընկալումը | Անվանակոչված աշակերտները պատասխանում են տրված հարցերին: Ինչպես նաև յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է իր թեման: | Կարճ դասախոսությամբ ներկայացնել նոր ուսուցանվող դասը: Այնուհետև պատմելու միջոցով ստուգել անվանակոչված աշակերտների գիտելիքները նոր դասանյութի վերաբերյալ: | 1) Հայաստանը ե՞րբ դարձավ քրիստոնյա երկիր<br>2) Ո՞ր տարածքում ստեղծվեցին քրիստոնյա համայնքները<br>3) Այնուհետև աշակերտների յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրեն հանձնարարված բաժինը:<br>4) Աշակերտներ ը ուշադիր լսում և պատասխանում մյուս խմբերի հարցերին: | Զրույց, համագործ ակցային մեթոդի մտագրոհ մեթդի կիրառում |
| Կշռադատում | Աշխակերտները լիարժեք ընկալում և պատմում են դասի բոլոր | Ուսուցիչը այս փուլում ամրապնդում ամբողջացնում է հիմնական | 1) Ո՞րն էր քրիստոնեության ընդունման պատմական | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մասերը հարցադրումները և հիմնական գաղափարները | գաղափարները Ապահովում հետադարձ կապ և վերջնարդյունքները | նշանակությունը և անհրաժեշտությունը | |
| Տնային աշխատանք | Տնային աշխատանքի հանձնարարում<br>Հանձնարարել՝ Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն Դասից դուրս բերել նոր անունները և հասկացությունները:<br>Գրել ժամանակագրությունը: | | | |

Հավելված **2**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա | Հայոց պատմություն | Ամսաթիվ | 09.09.22թ | Կիսամյակ | 1 | Դասարան | 8 |
| Թեմա | Ազատագրական պայքարի վերելքը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր | Դասագիրք, կավիճ, գրատախտակ, աշխատանքային տետր | | | | | | |
| Դասի նպատակ | Դասի վերջնարդյունքում աշակերտը պետք է.<br>ա) տիրապետի 17-րդ դարում ազատագրական պայքարի ներքին և արտաքին նախադրյալները,<br>բ) ներկայացնի աշխարհիկ և հոգևոր գործիչներին, գ) գիտենա գաղտնի ժողովների տարեթվերը,<br>դ) ներկայացնի Իսրայել Օրու գործունեությունը | | | | | | |
| | Ուսուցման իրականացման փաստացի արդյունքները | | | | | | |
| Վերջնարդյունքնե ր | Աշակերտները պետք է կարողանան.<br>վերլուծել և մեկնաբանել ներքին և արտաքին նախադրյալները,<br>կարողանալ ճիշտ ներկայացնել տարեթվերը, իրադարձությունները և գործող | | | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | անձանց, ինչպես գաղտնի ժողովների վայրերը: | | | |
| | | | | |
| Գործողություն. Ժամ/տրողություն | Ուսումնական գործունեություն <u>Աշակերտներ</u> | Ուսումնական գործունեություն <u>Ուսուցիչ</u> | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդներ |
| | Անհրաժեշտությա ն դեպքում պատասխանել ուսուցչի հարցերին | Հաշվառում, դասի նախապատրաստում, տնային առաջադրանքների ֆնեարկում | Բոլոր անհասկանալի հարցերի պարզաբանում | M-ածև աղյուսակ |
| Խթանում | Լսում են ուսուցչին, պատասխանում են հնչեցրած հարցերին՝ հարկ եղած դեպքում տալիս հարցեր | Հարցադրումների միջոցով աշակերտներին հիշեցնել նախորդ դասի կարևոր իրադարձությունների և պատմական կերպարների, նրանց, որպես պետական գործիչներ, կատարած ֆայլերի մասին | 1) ՈՒսուցիչը աշակերտներին ներկայացնում է նոր դասը: 2) Այնուհետև աշակերտներին բաժանում խմբերի՝ յուրաքանչյուրին հանձնարարելով առանձին | Զրույց, մտագրոհ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | պարբերություններ: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իմաստի ընկալում | Հարցերին պատասխանում են անվանակոչված աշակերտները: Անվանակոչված աշակերտները պատասխանում են թերի, մասամբ տալով ճիշտ պատասխաններ: Գերազանց սովորողները հարցերին տալիս են ճշգրիտ պատասխաններ: Անվանակոչված աշակերտները մոտենում են գրատախտակին և լրացնում աղյուսակը: | Կարճ դասախոսությամբ ներկայացնել նոր ուսուցանվող դասը: Այնուհետև պատմելու միջոցով ստուգել անվանակոչված աշակերտների գիտելիքները նոր դասանյութի վերաբերյալ: Անվանակոչված աշակերտներին հանձնարարել աղյուսակի տեսքով ներկայացնել ժողովները, գործիչներին և տարեթվերը | 1) 1-ին խումբը ներկայացնում 1- ին գաղտնի ժողովը: 2) 2-րդը խումբը ներկայացնում է 2-րդ ժողովը 3) 3-րդը ներկայացնում է Իսրայել Օրու գործունեությունը | Զրույց, հարցադրում ների մեթոդ, կիրառել մտագրոհ Հարցադրում ների մեթոդ: Աղյուսակի տեսքով ներկայացնել գաղտնի ժողովները, կարևոր իրադարձությունները, տարեթվերը և աշխարհիկ և հոգևոր գործիչներին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կոռադատում | Աշխակերտները լիարժեք պատասխանում են իրենց հանձնարարված | Ուսուցիչը այս փուլում ամրապնդում և ամբողջացնում է հիմնական գաղափարները | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բաժինը: Վերլուծում են դասի բոլոր հարցադրումները և հիմնական գաղափարները | | | |
| Տնային աշխատանք | Տնային աշխատանքի հանձնարարում<br>Ազատագրական պայքարի վերելքը Դասից դուրս բերել նոր անունները և հասկացությունները: Գրել ժամանակագրությունը: Լրացնել կիսատ թողնված աղյուսակը: Աշխատանք սկզբնաղբյուրների հետ | | | |